ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը. զբաղեցրած պաշտոնը**
   Քնարիկ Ահարոնյան, «Շիրակի արհեստների և նորարարական տեխնոլոգիաների պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն

2. ***Գործուղման վայրը և ժամկետները.***
   Չեխիայի Հանրապետություն, 2026 թվականի հոկտեմբերի 19-ից 23-ը ներառյալ

3. ***Հրավիրող կողմը***
   Էրազմուս+ ծրագիր՝ Չեխիայի Հանրապետություն, ք. Մլադա Բոլեսլավ, «Շկոդա Ավտո» համալսարան

4. **Գործուղման նպատակը /աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/**
   Մասնակցություն ԵՄ Էրազմուս+ ՄԿՈՒՀ կարողությունների զարգացման RenForce-«Վերականգնվող էներգիայի ոլորտում աշխատուժի ներուժի հզորացում» եռամյա ծրագրի շրջանակներում Մլադա Բոլեսլավի «Շկոդա Ավտո» համալսարանի կողմից կազմակերպված ուսումնական այցին:
   REnForce ծրագրի ղեկավար կոմիտեի նիստերին, նաև այլ հանդիպումներին և քննարկումներին մասնակցելը կարևոր էր մասնագիտական կրթության ոլորտում լավագույն փորձի փոխանակման, ՄԿՈՒՀ հաստատությունների և բիզնես ոլորտի միջև համագործակցության մոդելների առավելությունների ու մարտահրավերների, ԱՀՈՒՀ-ի լավագույն օրինակների ծանոթացման, ցանցային համագործակցության ամրապնդման, մասնագիտական քննարկումների և այցելությունների միջոցով համագործակցության նոր հնարավորությունների ու հեռանկարների մշակման առումով:

5. **Քննարկված թեմաները**
   - ✓ Մասնագիտական կրթության արդիականացում:
   - ✓ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտության վերանայված մոդուլային և պրակտիկայի ծրագրերի ներդրման արդյունավետության քննարկում՝ ԱՀՈՒՀ-ի տեսանկյունից:
   - ✓ «Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը արևային վահանակների տեղադրման և մարքեթինգի ոլորտներում մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններում» երկլեզու ուղեցույցի հրապարակում և վարչական, մանկավարժական, ուսանողական կազմի կողմից նպատակային օգտագործում:
   - ✓ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորման նպատակով կրթական հաստատությունների և գործատուների միջև նպատակային համագործակցության զարգացում:

6. Հանդիպումներ, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- ✓ Մասնակցություն Ավտո Շկոդա /Škoda Auto/ համալսարանում կազմակերպված REnForce ծրագրի ղեկավար կոմիտեի նիստերին, որոնց ընթացքում քննարկվեցին ծրագրի ընթացքը, իրականացված գործողությունները, ձեռքբերված արդյունքները և հետագա անելիքները:
- ✓ Շրջայց համալսարանի ուսումնական մասնաշենքերում և լաբորատորիաներում, ծանոթացում կրթական գործընթացի կազմակերպման, ժամանակակից ուսումնական սարքավորումների հագեցվածության և ուսանողների գործնական հմտությունների զարգացման համար ստեղծված պայմաններին:
- ✓ Հայկական գործընկերների ներկայացումների շրջանակում Շիրակի արհեստների և նորարարական տեխնոլոգիաների պետական քոլեջի գործունեության, մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի, միջազգային համագործակցության փորձի, ինչպես նաև միջազգային նախագծերին հաստատության մասնակցության ներկայացում:
- ✓ Քոլեջի զարգացման ուղղությունների և միջազգային համագործակցության ընդլայնման հնարավորությունների ներկայացում:
- ✓ Մասնակցություն չեխական մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ կլոր սեղան քննարկմանը՝ մասնագիտական կրթության արդիականացման, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորման, ինչպես նաև կրթական հաստատությունների և գործատուների միջև համագործակցության զարգացմանը:
- ✓ Մասնակցություն Solar Association Czech Republic-ի /Չեխիայի հանրապետության Արևային Ասոցացիայի/ ներկայացուցչի հետ քննարկմանը, որի ընթացքում՝

- ներկայացվեցին Չեխիայում արևային էներգետիկայի զարգացման արդի միտումները, աշխատաշուկայի պահանջները և մասնագետների պատրաստման առանձնահատկությունները:
- քննարկվեցին վերականգնվող էներգիայի ոլորտում կրթական ծրագրերի զարգացման, նոր մասնագիտական կարողությունների ձևավորման և միջազգային համագործակցության հնարավորությունները:

- ✓ Ուսումնական այց՝ Ավտո Շկոդա /Škoda Auto/ մասնագիտական դպրոց և Škoda Auto ավտոգործարան, որի ընթացքում ներկայացվեցին մասնագիտական կրթության արդիականացման, ուսանողների կարողությունների ձևավորման, ինչպես նաև ԱՀՈՒ մոդելի զարգացման ուղիները:
- ✓ Ուսումնասիրվեց.

- մասնագիտական կրթության կազմակերպման այն մեթոդները, որոնք նպաստում են սովորողների մասնագիտական հմտությունների զարգացմանն ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան պատրաստմանը,
- Škoda Auto համալսարանի և Škoda Auto մասնագիտական դպրոցի փորձը մասնագիտական կրթության և արդյունաբերության համագործակցության ոլորտում,
- դուալ կրթության արդյունավետ մեխանիզմները և դրանց կիրառման հնարավորությունները ուսումնական գործունեության մեջ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**
   - ✓ ՀՀ-ում Ասոցիացիայի ստեղծում՝ վերականգնվող էներգիայի ոլորտում աշխատող կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և գործատուների մասնակցությամբ:
   - ✓ ՀՀ-ում Ռեսուրս կենտրոնի ստեղծում՝ համալրված ժամանակակից սարքավորումներով, որը հնարավորություն կտա ուսումնական հաստատությունների դասախոսներին և ուսանողներին ծանոթանալ ոլորտի արդի պահանջներին և զարգացումներին, նաև օգտվել Ռեսուրս կենտրոնի հնարավորություններից:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

2026-2027 ուսումնական տարվա ավարտին վերանայված ուսումնական մոդուլների դասավանդման արդյունավետության վերաբերյալ տեղեկացնել ԿԳՄՍ նախարարությանը և առաջարկ ներկայացնել պետական կրթական չափորոշիչում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Գործուղումը նպաստեց մասնագիտական կրթության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրմանը, գործընկերային կապերի ամրապնդմանը և եվրոպական լավագույն փորձի ներառման հնարավորությունների բացահայտմանը:

Այցի ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու փորձը կկիրառվեն Շիրակի արհեստների և նորարարական տեխնոլոգիաների պետական քոլեջի կրթական գործընթացների կատարելագործման, միջազգային համագործակցության ընդլայնման և գործատուների հետ կապերի ամրապնդման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Ք. Ահարոնյան

Digitally signed by AHARONYAN KNARIK 5708640316
Date: 2026.10.27 16:09:12 AMT

_____

27.10.2026թ.